

դայ . և փորձած է՝ որ երր 'ի յերաշտն զայգին լաւ փորես , նա փորելն պաղեցնէ զտունկն , և զծարաւն անցնէ : Եւ 'ի մայիս ամսոյս պարտ է փոփոխել զհով տեղեացն տունկըն և զմեծամեծ ձիթենիքն և զայլ ազգ ծառքն : Ի մայիս սի աղբել այս նշանօքս զոր գրեմք . փորէ և բաց աղէկ զծառի տակըն , և ըզմաքուր հողն ընդ տակքն 'ի վեր կուտէ , որ աղբն յինքն չհասնի՝ որ այրէ և ապականէ զծառն . և զպատրուսներն այս ամիս ջրէ , և ջուր 'ի վերայ սրսկէ : Եւ զայն գետինն որ ուղենայ ոք զբաղն անցէ , և զայս ամիսս հնձէ զթրմղի¹ հերն և 'ի վերայ խոտին փուէ որ չորցընէ զայլ ազգ խոտքն , որպէս այլ յառաջն զրեցաք : Են ոմանք որ հոգցի² ցանեն զթրամուղն 'ի սիզուտ և 'ի փշարեր վայրքն , նա սրբէ զտեղքն և չորցնէ զամեն վայրի խոտքն : Նոյնպէս երր վաստակես զրուսած և զծաղկած թրմուղն հետ այլ խոտին , նա փտի թրմուղն , և զայլ խոտն 'ի հետ փտեցնէ : Են ոմանք որ զթրմուղն յայգին ցանեն , նա զայլ ազգ խոտն ոչնչացնէ , և տայ ինքն զիւր պտուղն :

Եւ 'ի մայիս ամիսն է պարտ զգինին յայլ աման փոխել . և տես որ կարասն նոր լնուա՝ նա 'ի լի չլնուա , այլ երկու թիզ պակաս լից , որ չունչն և ծուխն ենէ զինոյն . և թէ զիւր միրէն 'ի հետ լնուա՝ ղէն չունի . ապա տես որ 'ի մէկալ կարասն օտար մրուր չլինի մնացեալ , թէ ոչ աւերի զամենն :

Ի ՎԱՍՏԱԿՈՅ ԳՐՈՑ

¹ Հին բժշկարանն զթրմուա ասէ Եգիպտոսի բանակ :
² Հոգով , կամաւ :

ՌԱՓԱՑԻԼ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ

Չատերուն միշտ զարմանքի նիւթեղած է բազմահոչակ անուանս համբաւը , արժանին արդարե անմահական փառաց և պատուոյ , որ և արդէն իսկ անմահացած է գեղարուեստից ընդարձակ ասպարիզին մէջ : Եւ միթէ կարելի էր այնպիսաւոյ բարձրագոյն հանճարոյ տէր եղող մը , ինչպէս պիտի տեսնանք առջևի հատուածիս մէջ , առժամանակեայ իբրև յաւաղի՝ հետք մը դրոշմէր իր ասպարիզին մէջ , և կամ թէ երեկոյեան անցաւոր ստուերներուն նրման իր տարաժամ մահուամբը հետք մէկտեղ ծալլէր՝ ծրարէր անմոռաց յիշատակն ալ :

Զափաւոր աստիճան պատկերահանի մը որդի էր Ռափայէլ Սանցիոյ , Ուրպին քաղաքը ծնած , 1483ին աւագուրբաթ օրը : Հրաշալի գեղեցկութիւն մը կը փայլէր իր փափուկ մանկութեան դէմքին վրայ որ և տեսեց անեղծ և անթառամ մինչև իր մահը :

Նորածաղիկ մանկութեան հասակին մէջ սկսաւ ցուցնել կարգէ դուրս հանճարի տէր ըլլալը . արդէն իսկ ծնողքն ալ իբրև մարգարէութեան ոգւով լեցուած տեսակ տեսակ բարենչան գուշակութիւններ կ'ընէին իրենց որդւոյն վրայօք : Ռափայէլ երբոր քիչ մը հասակն առաւ , հայրը ետևէ եղաւ կրթել զորդին , բայց տեսնալով որ տղան զարմանալի յարմարութիւն մը և հանճար կը ցուցնէ պատկերհանութեան , չուտով ֆերուճիա խաւրեց որ երթայ մը շակէ իր հանճարը Պետրոս Վանուչչիին քով որ նոյն ժամանակուան երևելի պատկերահաններէն մէկն էր :

Գնաց Ռափայէլ և տեսնալով հոն Պետրոս Վանուչչիին նկարքները աշխոյժ և եռանդ մը զգաց , մինչև անխոնջ պարապելով քիչ ատենուան մէջ գերազանցեց իր վարժապետը :

Առջի նկարած պատկերներուն մէջն ալ՝ անզուգական հանճարոյն փայլերը

ցըցուց . պրանչելի փափկութիւն մը և գեղեցկութիւն մը կը տեսնուէր բոլոր իր նկարքներուն մէջ : Ինքը եղաւ առաջինն որ միացուց արուեստին հետ նաև բնութիւնն ալ, վասն զի մինչև իր ժամանակն արուեստակեալ երևոյթ մը ունէր պատկերահանութիւնը : Ինքն եղաւ ստացինը՝ նաև յունական վսեմ երևակայութիւնը նկարքներու մէջ գործածել :

Փինդարիքի ժամանակակից պատկերահաններէն մէկը՝ հաւնելով Ռափայելի քաշած նկարքներուն , հրաւերեց զինքը՝ ի Սիենա հետը մէկտեղ աշխատելու համար : Շատ զարմացաւ այն ծերացեալ ալեսոր պատկերահանն ալ մեծահանճար երիտասարդին վրայ և անկեղծ սրտիւ խոստովանեցաւ որ իրմէ շատ աւելի վարպետ , ճարտար և զօրաւոր էր : Սակայն Ռափայէլ զարձեալ միշտ ետեւէ կ'ըլլար առաւել ևս կատարելագործելու իր արուեստը : Ուստի գնաց նաև Փլորենտիա , տեսնալով հոն ալ լէոնարտոյի այլ և այլ նկարքները՝ նորանոր զգացմունքներ ստացաւ և աւելի ևս փափկացաւ զրիչը . բայց աւելի բարձր և վսեմ կատարելագործութիւնն մը ունեցաւ երբոր տեսաւ Միքէլ-Անդէլյոյին քաշածները , որուն մեծ յարդ և պատիւ կու տար : Վերջապէս համառօտ ըսելով ստեղծեց վեշտասաներորդ դարուն նկարչութիւնը : Ռափայելի հարուստ հանճարոյն ծննդոցը համար բնականապէս պէտք էր կանգնել թանգարան մը , ուր թէ ժամանակակից և թէ ապառնի մարդկութեան ազգը միշտ զարմանար տեսնալով այն անպատում հրաշալիքները . և ահա գտնուեցաւ այն թանգարանն ալ , որ է մեծագործ վատիկանի պալատը , ուր կը գտնուին իր գործոց մեծագոյն մասը :

Վասն զի նոյն միջոցուան Սրբազան Քահանայապետը Յուլիոս Բ. որ ետեւէ էր զհոռվմ զարդարել մեծագործութեամբ և գեղեցիկ յիշատակներով , հազիւ թէ լսեց Ռափայելի համբաւեալ անունը՝ շուտով կանչեց զինքը՝ ի Հոռվմ , և յանձնեց որ աշխատի վատիկանի մէջ , ուր

որ արդէն իսկ իրմէ առաջ պատկերհաններ աշխատեր էին : Հոն իր առջի գործը եղաւ Յունաց նախահայր փիլիսոփայից կաճառը նկարել այլ և այլ կերպարանքներով . զոր երբոր տեսաւ քահանայապետը մեծապէս զարմացած հրաման հանեց որ առջի հին պատկերահաններուն աղօտացեալ և ժամանակի հետ նսեմացած պատկերները յնջուկն , որոնց տեղ Ռափայէլ նորէն նկարէ , որուն միայն տրուած էր զարձեալ նըկարչութեան փառքը նորաստեղծել Հըռովմայ մէջ ալ : Ինչպէս նախանձաւոր և ջանասէր անձ մը միշտ կը վինտուէ դիպող առիթ և յարմար միջոցներ իր արուեստը աւելի ևս զարգացնելու՝ և ևս մշակելու իր հանճարը , այսպէս և Ռափայէլ ալ չդադրեցաւ երբէք օր ըստ օրէ իր հրաշագիծ գրիչը ճոխացընելէն՝ նիւթ և առիթ առնելով իրեն Հոռվմայ հին յիշատակները և մեծագործութիւնները , կրօնից չքեղաշուք հանդէսները՝ որոնք մեծագայլ յառաջադիմութեան պատճառ եղան :

Պզտի գաղափար մը առնելու համար Ռափայելի նկարքներուն գերազանցութեան , գեղեցկութեան և փափկութեան , և թէ ինչպէս կը կենդանացնէր և ընութեան կրքերը դուրս կը ցատքեցնէր , ստորագրենք հոս իր նշանաւոր պատկերներէն մէկը . ինչպէս օրինակի համար Պորկոյի հրկիզութեան նկարքը , յորում ամենակատարեալ կերպով կը տեսնուին վախի , սարսափի և գթութեան կրքերը և իւրաքանչիւր անձանց կենդանութիւնը՝ բնական զգացմունքները և շարժմունքները . ինչպէս ոմանց պատուհաններէ վար իշնալը , ոմանց կրակին բոցերուն մէջէն փախչիլը , խանդակաթ ծնողաց իրենց որդիքը խալսելը , և ոմանց ալ յուսահատ վիճակը և այլոց ծնկի եկած գթութիւն և օգնութիւն պաղատիլը , հրդեհին հետզհետէ զայրացմունքը և Սրբազան Քահանայապետին օրհնութիւն տալը : Այսպէս հրաշալի և զարմանալի էին բոլոր իր նկարքները :

Իսկ կարգէ դուրս մոքին և ձեռաց

արագութիւնը աւելորդ է ստորագրել՝
որուն զօրաւոր վկայք արձանացած են
իր գործոց արդիւնքները : Երեսուն և
եօթը տարուան էր մինչդեռ հինգ հա-
րիւրի չափ նկարքներ ստեղծեր էր Ռա-
փայէլ՝ որոնց մէկ քանին յիշատակենք
հոս , որ են . Զարչարանք Քրիստոսի ,
Մայր ցաւագին , Քրիստոսի Լիմբոս իջ-
նալը , դարձեալ Քրիստոսի քարոզու-
թիւնը առ իւր աշակերտու , և Այլակեր-
պութիւնը որ իրեն առաջին կարգի
նկարքներէն մէկն է , որուն մէջ ամենա-
հրաշալի կերպով Փրկչին իր երկնաւոր
լուսով՝ երկու մարդարէից հետ երկինք
վերանալը և առաքելոց շփոթիլը կը նը-
կարէ : Քիչ ժամանակի մէջ վատիկանի
պալատին որմունքները նորանոր ստեղ-
ծագործութիւններով զարդարեց : Ո՛
գիտէ այլ քանի քանի արդեօք ուրիշ
թանգարանաց մերկ որմունքներ փա-
ռահեղ պիտի զարդարուէին և չզար-
դարուեցան . ինչ միթէ յոզնեցաւ Ռա-
փայելի զարմանագործ և փափուկ մա-
տանց հրաշանկար գրիչը՝ որ անխոնչն
էր՝ ի նկարս , չէր յոգնած , դեռ աշխոյժ
և զօրաւոր էր . բայց աւաղ զի որ քան
զամենայն էր կարեսոր և էական՝ այն
սկսեր էր պակսիլ Ռափայելի , որ էր
ժանրագնոյ կենաց լապտերին սակա-
ւատե իւղը . զի ահա հազիւ երեսուն
և եօթներորդ տարուան ընթացից առ-
ջի քայլերը սկսեր էր առնել , յանկար-
ծական հիւանդութիւն մը հասաւ վը-
րան և ալ չկրցաւ իր փառաց ճանա-
պարհին մէջ շարունակել ընթացքը .
թուլացաւ հրաշագիծ ձեռքը , և գրիչը
չոր՝ ցամաք՝ անգործ եղեգի նման մնաց
ամայի : Թէպէտ բժիշկները բազմահոգ
խնամք և դարման տարին , բայց չկըր-
ցան առջնն առնուլ , որով երթալով
ժանրացաւ հիւանդութիւնը և ամեն
այցելուաց վրայ անփարատելի յուսա-
հատութիւն մը սկսաւ տիրել . կը դու-
շակէին ամենքն ալ՝ թէպէտ ակամայ
կամօք , որ վերջապէս մահագուշակ պի-
տի ըլլար այն հիւանդութիւնը :

Ռափայելի հիւանդութեան մահա-
գուշակ լուրը վատիկանի մէջ մէկ խոր

ու տխուր շնկոց մը ծաւալեց , հասաւ
նոյն աղեսալի լուրը մինչև լեռն Ս . Քա-
հանայապետին ականջը որ մէկէն իր
երկու ծիրանաւոր պաշտօնեայներու և
ուրիշ երևելի անձանց հետ գնաց հի-
ւանդին այցելութեան :

Մտաւ հիւանդին սենեակը զոր ա-
զոտափայլ չահ մը կը լուսաւորէր : Ռա-
փայէլ ներկայ և հանդերձեալ աշխար-
հաց սահմանածայրերու մէջ հասեր՝
վերջին շունչը տալու վրայ էր , երթա-
լով կը գոցուէին աչքերը , որոնք թէպէտ
աղօտացած՝ սակայն դեռ ևս իր վառվը-
ռուն և աշխոյժ հանճարոյն ճառագայթ-
ները՝ կը շողացնէին : Չորս կողմը կեցող-
ները որոնց իր վերջին բարեները կ'ընէր՝
յորդառատ արտասուզք լցուած կ'ող-
բային այն անդարմանելի կորուստը :
Մինչդեռ խոր գիշերուան տխուր ժամե-
րը կը հնչէին՝ վերջին անգամն ալ բա-
ցաւ աչքերը Ռափայէլ և ալ չբացաւ :

Հուսկ ուրեմն 1520ին աւագ շար-
թուն օրը Ռափայելի անշունչ գիակը
գրկեր էր երկիրս . լացին անմիսիթար
ազգականք , բարեկամք , ծանօթք և ան-
ծանօթք , արուեստակիցք և աշակերտք ,
վասն զի զգացին ամենքն ալ որ իրենց
սրտերնուն և ոգւոց սիրելի մը պակսե-
ցաւ , վասն զի Ռափայէլ ամենուն սի-
րելի եղած էր ոչ թէ միայն իր հանճա-
րոյն պատճառաւ , այլ և անոյշ քաղցրա-
համբոյր և շնորհալից վարմունքովը :
Զարմանալի խոնարհամութիւն մին
ալ ունէր որով աւելի կը սիրցնէր զին-
քը . փառամոլութեան ախտը չկրցաւ
տիրել անոր սրտին վրայ , որչափ փառք
և պատիւ վրան կ'աւելնային՝ այնշափ
և խոյս կու տար անոնցմէ , զիտելով
չափ թէ որչափ մարդս փառաց ետևէ
կը դիմէ՝ այնշափ աւելի կը հեռանայ
անկէ : Աշխատուսէր ոգին համբաւ մը
ձգեր էր ամեն տեղ , շատ անգամ կը
կանչէր իր արուեստակիցները և կ'օգ-
նէր անոնց խորհրդով , և շատ անգամ
ալ ձեռքի աշխատութիւնը թողուցած՝
անոնց վրիպակները կ'ողղէր ու կը
սրբագրէր :

Ռափայէլ երբոր Հուսկմայ մէջ կը

պտրտէր և կամ վատիկան աշխատելու կ'երթար, բազմութիւն անձանց կ'ընկերանային իրեն՝ ի նշան համարման և պատուոյ. Նմանապէս ժողովուրդն ալ երբոր լսէր թէ Ռափայէլ կ'անցնի՝ որը փողոց, որը պատուհան, որը գուռը կը վազէր տեսնալու այն երկնահանճար անձը և նկարչութեան մէկ հատիկ հեղինակը որ գերազանցեց քան զամեն իր ժամանակակից պատկերահանները. գերազանցեց քան զՄիքէլ Անձելոյ որ թէպէտ եղաւ զօրաւոր և վսեմ իր նրկարքներուն մէջ, սակայն Ռափայէլ անցուց զանիկայ ալ իր մնաքին հարուստ ըստեղծագործութեամբը և յարմարօրէն գոնաւորելովն և բնութիւնը ճշգրտատիպ նկարելովը : Եղաւ Լէռնարտոյ մըն ալ որ թէպէտ երեելի՝ հանճարով և հմուռթեամբ արուեստին, սակայն անկէ ալ մեծ էր Ռափայէլ իր թափանցող երեակայութեամբն և դիւրութեամբ նկարելովը, տալով միանգամայն ակնահաճոյ քաղցրութիւն մը և անուշութիւն մը բոլոր իր նկարքներուն : Եղաւ Դիցիանոս մըն ալ, սակայն տեսաւ աշխարհ թէ ինչ տարբերութիւն կայ այս երկու արուեստակիցներուն մէջ : Ճեսաւ աշխարհ որ թէպէտ Դիցիանոս ընտիր գունով կը ճշգրտէր իր նկարքները, բայց Ռափայէլ այնու հանդերձ արտաքին գեղեցկութիւն մըն ալ կ'աւելցնէր, ու կից վեր էր նաև սուր դիտողութեամբն ալ :

Արդ զփոքրն՝ ի շատէն՝ ի սակաւուն համառօտելով, երկայնապատումն շատ էջերու արժանաւոր կենսագրութիւնս, կը կնքենք հատուածնիս աւելցնելով՝ ի վախճանի բանիցս մէկ պղտի սլաքա-

կան ուղերձ մը առ անմահական յիշատակն Ռափայէլի : Բայց խօսքերնիս դեռ բոլորովին չմնցուցած, վերջի անգամ մըն ալ այց ելանք Ռափայէլի ցուրտ մարմնոյն, ցաւակցելու քովը կեցողներուն երևակայելով թէ ինչ տիսուր և սեաւ տեսարան էր այն երբոր վախճանելոյն անշունչ մարմինը դագաղի վրայ դրուած էր՝ ի տես հասարակաց՝ այն սրահին մէջ ուր որ քիչ ժամանակ առաջ նկարչութեան ոսկեղէն դարը իր գարնանային վարդափայլ արևուն ճառագայթները սկսեր էր ծաւալել :

Աշկերտները դրեր էին գլխին ետև իր այն զարմանապանչ այլակերպութեան պատկերը : Բազմութիւն բազմութեան ետև խուռնընթաց կ'երթային վերջին այցելութիւն և տեսութիւնը նելու համար, և կը տեսնային այն հրաշալի պատկերը որ թէպէտ լուռ էր՝ սակայն կը կարծուէր որ ազդարարող ձայնով մը իր անմահ հեղինակին վրայ սրտաշարժ դամբանական մը կ'արտասանէր՝ ի լուր ամեննեցուն : Բոլոր Հռովմքաղաքը իր մահուան օրը ուգի վրայ էր՝ լացի ու սուգի մէջ . ինչպէս նաև Սըրբազան քահանայապետին արքունիքն ալ :

Վասն զի շատ լաւ ճանցան այնպիսի մեծ անձի մը յարգը, և թէ ինչ մեծ կորուստ և զրկումն ունեցաւ վազահասմահուամբը բոլոր իտալիա . ոչ թէ միայն իտալիա այլ և համօրէն աշխարհ, խորհրդածելով թէ որպիսի նորանոր փայլեր պիտի ունենար նկարչութեան ասպարէզը եթէ ապրէր Ռափայէլ՝ որչափ ապրեցան Պոնարոդդի և Դիցիանոս :

Ա. Ռ. Ռ. Ա. Փ Ա. Յ Է Լ

Դեռ ըզգընտոյս շըրջապարոյր ոլորտիւք,
Ծայր արձակեալ զուարթաճաճանչ նըշուկիւք,
Տարփելին քո ոսկի արեւ քաղցրասկիք
Մագէր, եւ փայլ ըզգենուին մեր արփիք.
Փառաց զիւրեւ նորոգատուք,
Շուք արկանէր երկիր հանուր .

Եւ աւանիկ հասարակեալ չեւ յուղին,
Ըստ ծիրն ի տար կալաւ շաւիդ զարտուղին,
Եւ ոչ առ մեզ արար զանդորր երեկոյն՝
Զոր ծածկեցին տակաւ այերք մըթագոյն.
Որպէս զաստեղք գիշերավար
Մածնու ամպոց մըռայլ խաւար :

Մինչ ցօղահոս յակճիռ ընդ հետս բիբք անյոյս,
Թաւալէին յամպս ի յամպոց խոյզ ի խոյզ,
Նա մըշտրնջեան բարձր ընդ բըլուրս տարագէմ,
Եւ ընդ լերինս յակիտենից ուղիաճեմ,
Հզչող շաւիդ լուսակարկած,
Հսկայախրոխտ պընդէր յառաջ :

Եւ լայնածիր յանպարագիծ կամարաց,
Անմահութեան զուարթածաղիկ վառ յարկաց,
Հոսէր զերկրաւ կենսակայլակ ճառագայթ,
Առաւոտին արփեոյն հանդէտ ակնախայտ
Դադարեցան մըրմունջք մահու,
Եւ արտասուք աչաց աղու :

Զի ծանըր սուգ և դառնավէր խոց անբոյժ,
Ազդէր ի սիրտս, բօթ տրխրազգած մահագոյժ.
Եւ մինչ համբուն հետախաղաղ թէ ծածկեալ,
Զարեւդ ի մութ, ոհ, դիտէին աչք ի լալ.
Եւ համօրէն փարատեցան,
Մըռայլք մըթին ըատուերական :

Զի ոչ առ քեզ իշխեաց հըպիլ խաւար խոր,
Խոյս ետ փախեաւ եւ ծագեցար լուսաւոր.
Ոչ վայրաբեր երեկորոյ մուտք աղօտ.
Նըկատեսցեն ի քեզ աչք մեր հետազօտ.
Նոյն ի յապայս յետագայից,
Յորդեացին քո ծուփք նըշովից :

Երրեակ դարուց բոլորք ի հիռ ետ ընդ ետ,
Անկան ըգբեւ ջինջ պարունակ լուսաւէտ.
Անմահ ըգբեզ դարք համօրէն պաշտեսցեն.
Ոչ ի դիւրեղծ տախտակ, ի վէմ տարբեղէն
Թէ քանդակեալ քո յիշատակ,
Այլ ի սըրտից յաստի տախտակ :

Հ. Ա. Ե.

